ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ռուզաննա Գաբրիելյան, բյուջետային գործընթացի համակարգման վարչության պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնություն, ք. Սարաևո, 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև ապրիլի 19-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Համաշխարհային բանկի PEMPAL բյուջետային գործընկերություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Բյուջետային գործընկերության տարեկան լիագումար նիստին, որի ընթացքում ներկայացվել են հարկաբյուջետային արդյունավետության և հաշվետվողականության բարելավման նոր գործիքակազմ և նոր մոտեցումներ: Դասընթացի նպատակն ու առաջնահերթությունն է եղել կատարելագործել այն գործիքները, որոնք թույլ կտան իրականացնել հաջող հարկաբյուջետային կառավարում, ապահովել հարկաբյուջետային թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչպես նաև նպաստել գիտելիքների փոխանակմանն ու PEMPAL երկրներում բյուջետային տեղեկատվության միջազգային հասանելիության բարձրացմանը:

5. Քննարկված թեմաները.

1. Բոսնիա և Հերցեգովինայի պետական ֆինանսական կառավարման համակարգին և SS աջակցող գործիքներին ծանոթացում,
2. բյուջետային գործընկերության կողմից իրականացվող ռազմավարական պլանավորման և բյուջետավորման նոր մոտեցման ծանոթացում, կարծիքների ներկայացում և PEMPAL երկրների օրինաների ուսումնասիրություն,
3. բյուջետային գործընկերության կողմից իրականացված ուսումնասիրության նախնական արդյունքների ներկայացում՝ PEMPAL անդամ երկրներում ծրագրերի և արդյուքների վրա հիմնված բյուջեի կազմման փորձի վերաբերյալ,

4. բյուջետավորման գործընթացում արհեստական բանականության կիրառման և այլ նորարարական գործիքների օգտագործման ինտեգրում,

5. բյուջեի թափանցիկության փորձի ուսումնասիրություն PEMPAL երկրների օրինակով,

6. փորձի փոխանակում և կարծիքների հավաքագրում PEMPAL-ի երկրների միջև, 2025 թվականի ֆինանսական տարվա առաջնահերթ թեմաների վերաբերյալ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ՝ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել են շնորհանդեսներ, որոնք ներկայացվել և քննարկվել են դասընթացի մասնակիցների հետ: Միաժամանակ, շնորհանդեսի միջոցով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին ներկայացվել են դասընթացն ամփոփող և խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների, քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

25.04.2024թ.